

դեռահասն ունի հնարավորություն վերարտադրողական տարիքում չհետաձգել մանկաձնման ֆունկցիայի իրականացումը կամ դիմել ձվաբջիջների կամ սաղմերի սառցապահպանման: Սակայն նա պետք է իրազեկված լինի, որ կատարելով սառցապահպանում՝ սառեցվում են նրա ձվաբջիջները, ոչ պտղաբերության հնարավորությունը: Հետևաբար, աղջիկները և կանայք պետք է լիարժեք խորհրդատվություն ստանան հղիության պլանավորման վերաբերյալ:

Շատ կարևոր է հեղինակի կողմից հետազոտության մեթոդաբանության պահպանումը, ինչը վկայում է առաջարկվող չափանիշների հուսալիության և բարձր ճշգրտության մասին:

Հետազոտության արդյունքները հեղինակին հիմք են տվել սահմանելու, որ հակամյուլերյան հորմոնը, ֆոլիկուլխթանիչ հորմոնը և ձվարանների անտրալ ֆոլիկուլների քանակը հանդիսանում են ձվարանային պահուստի գնահատման արժեքավոր ցուցանիշներ ձվարանի վիրահատական միջամտությունից առաջ և հետո, որն արժանի է երկարատև ուսումնասիրության ավելի շատ դեպքերում՝ հաշվի առնելով այս խնդրի կարևորությունը և առանցքային նշանակությունը:

Ստացված տվյալների համաձայն՝ հակամյուլերյան հորմոնը և ձվարանների անտրալ ֆոլիկուլների քանակը հանդիսանում են ձվարանային պահուստի գնահատման արժեքավոր ցուցանիշներ ձվարանի ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ 5-7սմ տրամագծով ձվարանի գոյացություն ունեցող դեռահասների մոտ ախտորոշման պահին և յուրաքանչյուր 6 ամիս անց՝ մինչև վիրահատական բուժման անհրաժեշտությունը, որը հաստատվում է վիճակագրական վերլուծության տվյալներով: Հետազոտություններն անցկացվել են մեթոդաբանական բարձր մակարդակներով:

Ժամանակակից տեսական և կլինիկական բժշկագիտության համար կարևոր նշանակություն ունեն հեղինակի կողմից առաջ քաշած դրույթները: Առաջինը առողջության առաջնային պահպանման կենտրոններում, մանկական գինեկոլոգիայի բաժանմունքներում վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստի դիսկի խմբի դեռահասների հետազոտության մեջ հակամյուլերյան, ֆոլիկուլխթանիչ հորմոնների և ձվարանների անտրալ ֆոլիկուլների քանակի դինամիկ չափման նպատակահարմարությունն է: Հաջորդը վահանաձև գեղձի հորմոնալ